



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Արցախը վերամիավորվելու է միմիայն Հայաստանի Հանրապետությանը

Ուկրաինական ճգնաժամը եւ հատկապես Ղրիմի շուրջ ձեւավորված միջազգային հանրության ուշադրությունը եւ ռուս-ուկրաինական հարաբերությունների նուրբ եւ լարված ընթացքն իրենց ստվերներն են գցում նաեւ մեզ՝ հայերիս վրա: Մեր «նուրբ» զգայարանները հատկապես գրգռեց ՌԴ Պետդոմալի պատգամավոր, Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ, իրեն հայ ժողովրդի բարեկամ համարող Վ.Շիրինովսկու մտքի թռիչքը՝ լրագրողին հարցին ի պատասխան նշելով, որ «...Հայաստանը եւ Ադրբեջանը երբեք համաձայնության չեն գա Ղարաբաղի հարցում: Այդ պատճառով, լավագույն լուծումը՝ այն Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկելն է, ինչի շնորհիվ հայերը չեն նեղսրտի, ադրբեջանցիներն էլ ստիպված կլինեն համակերպվել»:

Նրա խոսքերով՝ ԽՍՀՄ կազմի մեջ նախկինում ընդգրկված բոլոր տարածքներն էլ ցանկության դեպքում կարող են Ռուսաստանի մաս կազմել. «...Բոլորը էլ կարող եք վերադառնալ Ռուսաստան եւ բոլորի համար էլ լավ կլինի: Խոստանում ենք դեմոկրատիա, անվտանգություն, բարեկեցություն: Մենք բոլորս 300, 400, 500 տարի ապրել ենք միասին»:

Իհարկե, ծանոթ լինելով ռուս քաղաքական գործչի անհատականության հետ, կարող ենք ենթադրել, որ այն կարող է լինել նաեւ իր անձնական տեսակետն ու հայտարարությունը: Սակայն, չի բացառվում, որ այն լինի նաեւ ռուսական կողմի հերթական «փորձարկում» հայ ժողովրդի եւ հայկական քաղաքական դեկլարության շրջանակներում:

Իհարկե, պետք է ընդգծել, որ հայ ազգաբնակչության ստվար հատվածը պարզապես լուրջ եւ աղեկվատ չի ընդունում ոչ պարոն ժիրինովսկու կերպարը, ոչ էլ, առավել եւս, նրա ելույթները, չնայած մեր ականջներին հաճելի է եւ միանգամայն ողջունելի, երբ նույն ինքը՝ պարոն ժիրինովսկին բազմիցս հրակարակավ խոսել է Բիբլիական Արարտն ու Արեւմտյան Հայաստանը Հայաստանի Հանրապետության կազմ միացնելու եւ հայ ժողովրդի՝ միասնական Հայաստանում ապրելու մասին: Այս համադրությունների ֆոնին՝ կարող ենք ենթադրել, որ ռուս պատգամավորի հայտարարությունը միգուցե պատվիրված էր:

Ամեն դեպքում, մենք ասելիք ունենք պարոն ժիրինովսկու. եթե դա իր անձնական տեսակետն է եւ համոզմունքը, ապա միգուցե իր համար ուշացած, բայց եւ անհարժեշտ ենք համարում նշել, որ ողջունում ենք իր՝ հարգարժան ժիրինովսկու՝ Միացյալ Հայաստանի կերտման իր համոզմունքն ու ձգտումները՝ պարտադիր շեշտելով, որ Արցախը չի կարող անմասն մնալ մեր երազած Միացյալ Հայաստանից, որ արցախցու համար Հայաստանը նույնքան հայրենիք է, որքան օտարության մեջ գտնվող մշտնջու, վանեցու համար:

Իսկ եթե մտածենք, որ՝ այնուամենայնիվ պարոն ժիրինովսկու շուրթերով հնչել է ռուսական պաշտոնական վարկած, ապա պետք է շեշտել եւ մեկ անգամ եւս հայտարարել, որ Արցախի Հանրապետությունը հայ ժողովրդի հայրենիքն է եւ հպարտությունը, մեր ժողովրդի անվտանգության երաշխավորը, եւ եթե երբեւէ Արցախը ցանկություն հայտնի մտնի որեւէ պետության կազմի մեջ, դա անշուշտ լինելու է Հայաստանի Հանրապետությունը, եւ այդ դեպքում է, որ արցախցիներն, իրոք, չեն նեղսրտվի:



Ամեն հայ պետք է ապրի «Մահ կամ ազատություն» կարգախոսով

Ճեպագրույց ԼԴՀ փոխվարչապետ, ՀՀ Արցախի ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանի հետ

Վերջերս Արցախում մեծ շուքով տոնեցինք ՀՀ 123-ամյակը: Որպես Արցախյան շարժման առաջին օրերից ՀՀ շարքեր անդամագրված, բազում իրադարձությունների մասնակից, դաշնակցական հրամանատար՝ այս ամենը հավանաբար ընկալելի էր: Իսկ ընկալելի էր արդյո՞ք ձեզ՝ որպես պետական պաշտոնյայի, այս տոնակատարության ձեռնադրո:

Եթե պիտի խոսեմ 1989-ի հեռավորությունից, որոշ բաներ չէի հասկանում. երգվել զենքի վրա, պայքարել հակառակորդի դեմ՝ մնալով ընդհատակում: Ինձ մոտ այնպիսի տպավորություն կար, որ յուրաքանչյուր արցախցի դաշնակցական է, որովհետեւ տեսնում էի, որ յուրաքանչյուր տղամարդ զենք է փնտրում՝ ոմանք իրենց տունը պահելու, ոմանք՝ հայրենի գյուղը:

Անդամագրվելով ՀՀ շարքեր՝ հասկացա, որ պատասխանատվություն եմ կրում, գործելու եմ կոնկրետ հրամայականներով, մասնակից եմ լինելու քննարկումների, բայց պետք է մի կողմ թողնեմ անձնական տեսակետներս եւ անվերապահորեն կատարեմ ցանկացած որոշում՝ լինի դա իմ, կոմիտեի, թե շրջանի որոշումը: Ցանկանում էի, որ ամեն արցախցի երգվի դրոշի եւ զենքի վրա, միաժամանակ շարունակելով հավատալ, որ բոլորը դաշնակցական են: Այն առաքելությունը, որ դատապարտված էր ստանձնելու ՀՀ-ն 1989-ին, 1990-ին, 1991-ին, առաքելություն էր Արցախի լինելության, պայքարի. պայքարի՝ մահ կամ ազատություն կարգախոսով: Այդ օրերին մեր մեջ մերժել էինք ամեն դժվարություն, հանել էինք մեր միջից ամեն տեսակի վիրավորանք, որ պատճառել էինք իրար նախկին հասարակարգում, նախկին իշխանության կողմից: Գիտակցում էինք, որ պիտի ապրենք մահ կամ ազատություն կարգախոսով՝ մահ պատճառելով հակառակորդին, ազատություն պարգևատրելով մեր ժողովրդին:

Կցանկանալի՞ արցախցին, անկախ կուսակցական պատկանելությունից, ապրի մահ կամ ազատությամբ: Եթե ոչ՝ ազատություն, ապա՝ ինչ...
Հասարակության մեջ, Դաշնակցության հետ կապված, գոյություն ունեն որոշակի կարծրատիպեր: Մասնավորապես, մահ կամ ազատություն լսելով՝ մարդիկ մտածում են, որ դա պատերազմի կոչ է: Ինչ կարծիք ունեք

այս դիտարկման վերաբերյալ:

Կղադարենք որպես ժողովուրդ լինել, եթե չապրենք մահ կամ ազատությամբ: Այլապես՝ ստրուկը կլինենք ստրկատիրոջ, ճորտը՝ ճորտատիրոջ: Կցանկանամ՝ ամեն արցախցի իր մեջ կոտրի այդ կարծրատիպը եւ ապրի այս գաղափարախոսությամբ, այլապես չենք կերտի ամուր եւ հզոր երկիր: Իրականում՝ ռազմի դաշտում այլ կարգախոս չէր կարող փոխարինել մահ կամ ազատությանը, քանի որ պարզ հասկանում էինք՝ մահը թշնամուս, ազատությունը մեզ, մահը մեզ, ազատությունը մեր ժողովրդին: Եթե կա դրա անհրաժեշտությունը, կարծում եմ՝ ինձ կհասկանա ցանկացած ոք, ով ծանոթ է ՀՀ շարքերն ընդունվելու երդման տեքստին: Երդում, որը չի գիշում Չինված ուժերի ծառայությանն անցնող զինվորականների երդմանը: Երդման տեքստ, որը հավասար է նախագահների՝ իրենց ժողովրդին ծառայելու երդմանը: Հակառակորդը քսած չէ. մի օր նորից ստիպված ենք լինելու զենք վերցնել: Դրա համար՝ ամեն օր ցանկացած հայ պետք է ապրի մահ կամ ազատությամբ:

Հարցազրույցը՝ Արմինե ՆԱԻԿՅԱՆԻ

Հայաստանի պաշտոնական դիրքորոշումն իրականում փոխվել է. Կիրո Մանոյան



«Ապարաժ» թերթի հարցազրույցը ՀՀ Դաշնակցության հարցերի պատասխանատու Կիրո Մանոյանի հետ

- Թուրքիայում ստեղծված այդ հատուկ հանձնաժողովը նոր է կազմվել, բայց նոր չէ Թուրքիայի վարչապետարանում նույն նպատակի համար գործող գրասենյակը: Կարծում եմ՝ այդ հանձնաժողովը գործելու է նույն այդ գրասենյակի աշխատակազմի միջոցով:

Կարդացեք 2-րդ էջում

Ադրբեջանը խստորեն դատապարտվել է ԱՄՆ սենատում



Սուվալիթում իրականացված ջարդերի 26-րդ տարեկից կապակցությամբ ԱՄՆ Իլինոյս նահանգը ներկայացնող հանրապետական սենատոր Մարկ Զիրքը խստորեն դատապարտել է Ադրբեջանին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվող սպառնալիքների եւ ագրեսիվ գործողությունների համար:

Կարդացեք 4-րդ էջում

ՀՀԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական խորհրդի հայտարարությունը

ՀՀԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, որում ողջունում է ՄԻԵԴ-ի դեկտեմբեր 17-ի որոշումը բողոքարկելու՝ Շվեյցարիայի կառավարության որոշումը:

Հայտարարության մեջ ասված է. «Կողմնակց Շվեյցարիայի կառավարության որոշումը՝ բողոքարկելու ՄԻԵԴ-ի դեկտեմբեր 17-ի որոշումը, փաստորեն, այս քայլով Շվեյցարիան իր օրենսդրությունը պաշտպանելու ջանք է գործադրում, միաժամանակ՝ ընդառնում համայն հայութեան ակնկալիքին՝ դեկտեմբեր 17-ի որոշումը բողոքարկելով՝ ՄԻԵԴ-ի որոշումին Հայոց Ցեղասպանության վերաբերող խնդրահարոյց հաստատումները սրբագրելու հնարավորություն ստեղծելով:



Անշուշտ, այս գործընթացը տակադին մի քանի հանգրվաններ ունի, որոնցից առաջինը պիտի լինի ՄԻԵԴ-ի Մեծ Պալատի կողմից Շվեյցարիայի բողոքը

ընդունելու կամ չընդունելու որոշումը: ՀՀԴ Հայ Դատի հանձնախմբերը ամենուրեք, հայության տարբեր հատվածները ներկայացնող այլ կառույցների հետ, դիմել էին Շվեյցարիայի իշխանություններին՝ նման որոշում կայացնելու համար:

Այժմ, Հայ Դատի հանձնախմբերը իրենց աշխատանքները պիտի կենտրոնացնեն հաջորդ հանգրվանները եւս արդյունավետ անցնելու վրա: Այս այն խնդիրն է, որ կպահանջենք համազգային համախոհություն եւ հնարավորությունների լարում՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: Ցանկալի արդյունքը՝ ՄԻԵԴ-ի որոշմանը Հայոց Ցեղասպանության վերաբերող խնդրահարոյց հաստատումների սրբագրությունն է»:

Հայաստանի պաշտոնական դիրքորոշումն իրականում փոխվել է. Կիրո Մանոյան

«Ապառաժ» թերթի հարցազրույցը ՀՀԴ Հայ Դատի եւ քաղաքական հարցերի պատասխանատու Կիրո Մանոյանի հետ

Պարոն Մանոյան, արդեն տեղեկություններ են հրապարակվել, ըստ որի՝ Թուրքիայում ստեղծվել է Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի հատուկ հանձնաժողով, ինչը գործելու է Թուրքիայի վարչապետի անմիջական վերահսկողության ներքո: Ի՞նչ էք կարծում, այդ հանձնաժողովը որքանով է խոչընդոտելու Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ նախատեսվող ծրագրերի իրականացմանը եւ, առհասարակ, ի՞նչ հնարավոր հարված կա-

ռումներով: Միաժամանակ, պիտի արձանագրել, որ 2014թ. այս մի քանի ամիսների ընթացքում, երկու եվրոպական ազդեցիկ՝ ՆԱՏՈ-ում Թուրքիայի դաշնակից պետությունների ղեկավարներ՝ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ակնարկելով Հայոց ցեղասպանությունը, Թուրքիային կոչ արեցին ընդունել սեփական պատմությունը: Կարծում եմ՝ միջազգային այս մթնոլորտն է, որ անհանգստացրել է Թուրքիային, եւ այդ պատճառով էլ կատարվեց հանձնաժողովի մասին հայտարարությունը: Չեմ կարծում, որ Թուրքիայի այս նոր հնարքը կկարողանա

Նրանից, թե քանի գրասենյակ կամ հանձնաժողով կաշխատեցնեն, այդ քաղաքականության հիմքը մնում է նույն սուտը: Իսկ միջազգային հանրությունը գիտի իրականությունը: Եթե մի շարք պետություններ առաջուր մերժում են՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դրա պատճառն այն չէ, որ նրանք դրա մասին չգիտեն. բոլորն էլ գիտեն: Եվ 100-ամյակն ինքնին պարտադրում է բոլորին՝ Թուրքիայի ժխտողական քաղաքականության մեղսակից չդառնալ: Այնպես որ, Թուրքիայի ամեն մի նոր ժխտողական քայլ ստեղծելու է համարժեք ու համապատասխան հակազդեցություն միջազգային հանրության մոտ, հատկապես՝ մեր՝ հայության մղումով:

Այս հանձնաժողովը նպատակ ունի լուրջ աշխատանքներ ծավալել հատկապես Հայկական սփյուռքի աշխատանքների խոչընդոտելու համար: Այս ֆոնին, երբ այլևս տատանվելու եւ երկմտելու տեղ չկա, հնարավոր է Հայաստանի պաշտոնական դիրքորոշման վերանայում Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

- Կարծում եմ՝ Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրում Հայաստանի պաշտոնական դիրքորոշումն իրականում փոխվել է: Հայաստանի իշխանություններն այլևս չունեն այն խաբկանքը, թե Թուրքիան պատրաստ է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, շրջափակումը հանել՝ առանց նախապայմանների: 2009թ. Հայաստան-Թուրքիա արձանագրությունների ստորագրումից մեկ տարի անց, արդեն բարձրագույն մակարդակի վրա այդ մասին հայտարարություններ էին կատարվում ՀՀ իշխանությունների կողմից: Խնդիրն այն է, որ ՀՀ իշխանությունները չեն ուզում որեւէ քայլ ձեռնարկել, օրինակ՝ ստորագրությունը հետ վերցնել արձանագրություններից, որը կարող է կրեմլոստեղծի կողմից մեկնաբանվել՝ որպես ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորություններից հրաժարում: Մինչդեռ, ՀՀ իշխանությունները պարտավոր են՝ այն լծակը, որ Թուրքիային են տվել այդ արձանագրությունները, հետ վերցնել Թուրքիայի ձեռքից: Դա պետք է անել մինչեւ 2015 թվականը:

Լեհաստանում Հայ Դատի հանձնախումբ է ստեղծվել



Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի նախաձեռնությամբ ստեղծվեց Լեհաստանի Հայ Դատի հանձնախումբ:

Լեհաստանի Հայ Դատի հանձնախմբի հիմնական նպատակը պետք է լինի՝ Լեհաստանի հանրությանն ու կառավարությանը հաղորդակից դարձնել հայ ժողովրդին հուզող հարցերին եւ արդար պահանջներին, ինչպես նաեւ սերտ հարաբերություններ հաստատել Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության եւ Լեհաստանի հայ համայնքի հետ:

Հայ Դատի նորաստեղծ հանձնախումբը կընդառաջի Լեհաստանում մեր հայրենակիցների առաջարկներին ու տեսակետների քննարկմանը՝ ակնկալելով, որ Լեհաստանի հայ համայնքը կաջակցի հանձնախմբի աշխատանքներին:

Լեհաստանի Հայ Դատի հանձնախմբին իրենց աջակցությունն են հայտնել տարբեր երկրներում գործող Հայ Դատի հանձնախմբերը:

Լեհաստանի Հայ Դատի հանձնախումբն իր առաջին նիստում հաստատեց աշխատանքային իր հիմնական ուղեցույցը եւ մշակեց մի շարք ծրագրեր, որոնք մոտ ապագայում պիտի դառնան հանրության սեփականությունը:



րող է այն ենթադրել ՀՀԴ Հայ Դատի հանձնախմբերի աշխատանքներին:

- Թուրքիայում ստեղծված այդ հատուկ հանձնաժողովը նոր է կազմվել, բայց նոր չէ Թուրքիայի վարչապետարանում նույն նպատակի համար գործող գրասենյակը: Կարծում եմ՝ այդ հանձնաժողովը գործելու է նույն այդ գրասենյակի աշխատակազմի միջոցով: Նոր կազմության մասին հայտարարությունը, ենթադրում եմ, քաղաքական կեցվածք հրապարակելու համար է եւ ոչ թե նոր գործունեության սկիզբ: Այդ գործունեությունն արդեն առկա է Թուրքիայի կողմից: Այս նոր հայտարարությունը, կարծում եմ, այն պատճառով է, որ համայն հայությունը պատրաստվում է Հայոց ցեղասպանության 100-ամյակին տարբեր բնույթի միջոցա-

խոչընդոտել մեր աշխատանքները, որովհետեւ մեր տասնամյակների աշխատանքն արդեն տվել է իր դրական արդյունքը եւ միջազգային հանրության մոտ ստեղծել համապատասխան մթնոլորտ՝ ինչպես տեսանք Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարների կոչերում:

Ի՞նչ էք կարծում, Թուրքիայի ժխտողական քաղաքականության բյուրեղացումը, հատկապես Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, կարող է հակառակ ազդեցությունն ունենալ հենց Թուրքիայի համար՝ միջազգային հանրության հարթակներում:

- Կարծում եմ՝ այդպես էլ կլինի, որովհետեւ Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը հիմնված է իրականությունը խեղաթյուրելու վրա, եւ անկախ

Արցախը աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը մարտի 13-ին Փարիզում հանդիպել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Լորան Ֆաբյուսի հետ: Հանդիպման արդյունքների մասին ՀՀ ԱԳՆ տարածած հաղորդագրությունում նշվում է, որ քննարկվել է նաև Արցախի հիմնախնդիրը: Էդվարդ Նալբանդյանը մասնավորապես կարեւորել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների միասնական ջանքերը՝ միտված հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը, եւ վերահաստատել Հայաստանի պատրաստակամությունը՝ շարունակելու Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ աշխատանքը՝ ուղղված հիմնախնդրի հանգուցալուծմանը:

Չնայած այս ձեւակերպումներն առաջին հայացքից թվում են ոչ այդքան կարեւոր, ու կարծես թէ Արցախի հիմնախնդրի շուրջ հնչած հերթական հռչակագրային բնույթ ունեցող ձեւակերպում են, սակայն այստեղ հատկապես պետք է առանձնացնել «համանախագահ երկրների միասնական ջանքերը՝ միտված հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանը» ձեւակերպմանը: Վերջին շրջաններում շատ քաղաքական վերլուծաբաններ սկսել են խոսել Արցախի հիմնախնդրի կարգավորման մեջ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների տարաբաժանման մասին, մի կողմից՝ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի, եւ դա կարծես թէ առավել ընդգծվում է ուկրաինական հակամարտության ֆոնին: Հատկանշական է նաև, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Հայաստանի արտգործնախարարի հետ հանդիպել են Մոսկվայում, իսկ Ադրբեյջանի արտգործնախարարի հետ՝ Փարիզում: Այդ ամենն առավել ցայտուն կերպով է դրսևորվում ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ ԱՄՆ-ն ներկայացնող համանախագահ Ջեյմս Ուորիլի թվիթթերյան գրառումներում: Իր վերջին գրառումներում նա նշում է, որ մի շարք հանդիպումներ է ունեցել Մոսկվայում: «Մոսկվայում խորհրդակցությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ արժեքավոր են: ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Ֆրանսիան միասին կաշխատեն, որպեսզի աջակցեն խաղաղությանն ուղղված ջանքերին»: Թե ինչ խորհրդակցությունների մասին է խոսքը՝ հանրությանը ծանոթ չէ, սակայն եւ՝ Հայաստանի ու Ֆրանսիայի արտգործնախարարների հանդիպման ժամանակ, եւ՝ Ուորիլի գրառման մեջ ընդգծվում է համատեղ ջանքերի մասին, որը պետք է ուղղված լինի խաղաղությանը: Եվ այստեղ հարց է ծագում՝ հնարավոր է, որ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան ուկրաինա-

կան ճգնաժամի ֆոնին Արցախում պատերազմի հրահրման վտանգ են տեսնում: Հատկապես վերջին հարցադրումը հիմնավորում է նույն Ջեյմս Ուորիլի մեկ այլ գրառում, որտեղ նա մտահոգություն է հայտնում, որ Ուկրաինական իրադարձությունները կարող են ազդել Արցախում իրավիճակի սրման վրա: «Ես լսել եմ մտահոգություններ՝ որ այն ժամանակ, երբ ուշադրությունը կենտրոնացված է Ուկրաինայի վրա, Հայաստանի եւ Ադրբեյջանի միջև բռնությունները կարող են ավելի սրվել»:



Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Արեւմուտքը կարծես թէ մտահոգություն ունի Ուկրաինական զարգացումների ֆոնին Լեռնային Ղարաբաղում իրավիճակի սրման համար: Արեւմուտքին ձեռնտու չէ նոր լարվածություն հետխորհրդային տարածքում, մասնավորապես այնպիսի տարածաշրջանում, ինչպիսին Հարավային Կովկասն է, որն անմիջապես սահմանակից է Իրանին, իսկ Լեռնային Ղարաբաղում հակամարտությունն անմիջապես կանդաղառնա նաև Արեւմուտք-Իրան՝ առանց այդ էլ լարված բանակցությունների:

Արմուտքը փորձում է հարաբերությունները կարգավորել Իրանի հետ, ինչն ուղիղ հարված կլինի Ռուսաստանի շահերին, քանի որ Իրանի հետ լավ հարաբերություններ ունենալու դեպքում՝ պարզ է, որ իրանական նավթն ու գազը կհոսեն դեպի Եվրոպա, ինչը նախ տնտեսական մեծ հարված կլինի Ռուսաստանի համար, որի տնտեսությունը հիմնականում կախված է բնական պաշարների արտահանումից, ինչպես նաև Եվրոպային դուրս կբերի Ռուսաստանից գազային կախվածությունից եւ Ռուսաստանը կկորցնի իր քաղաքական լծակները Եվրոպայի վրա: Արեւմուտք-Իրան մերձեցումը դուր չի գալիս նաև

Թուրքիային, քանի որ այդ դեպքում Իրանը կամրապնդի իր դիրքերը տարածաշրջանում եւ ատիճանաբար դուրս կմղի Թուրքիային, ինչպես նաև Ադրբեյջանին: այդ մերձեցումը նաև փորձում է կանխել Իսրայելը՝ հայտնի պատճառներով:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Արցախի հիմնախնդրի կարգավորման հետագա զարգացումները կամա թե ակամա ընգրկվելու են տարածաշրջանային գլոբալ զարգացումների մեջ, եւ ներկայումս հայկական դիվանագիտու-

յի պատգամավոր, հայտնի քաղաքական գործիչ Վլադիմիր ժերենովսկին «Նորությունների ռուսական ծառայություն» ռադիոկայանի ուղիղ թերթում պատասխանելով ռադիոլսողի հարցին՝ այն մասին, որ հնարավոր է արդյոք, որ Ղրիմի օրինակով Աբխազիան, Հարավային Օսիան եւ Լեռնային Ղարաբաղը միացվեն Ռուսաստանին, մասնավորապես ասել է. «Լեռնային Ղարաբաղի հարցով՝ երբեք պայմանավորվածության չեն գա, դրա համար լավագույն տարբերակը այն (Լեռնային Ղարաբաղը) նույնպես մտցնել Ռուսաստանի կազմի մեջ. այդ ժամանակ եւ հայերը չեն նեղանա, եւ ադրբեյջանցիները ստիպված կլինեն հաշտվել, քանի որ այն Հայաստանին չի մնալու, այլ մտնելու է Ռուսաստանի կազմի մեջ»: Ի դեպ, հարցը հնչեցնողն ասել է, որ իբր Լեռնային Ղարաբաղում հանրաքվեի ժամանակ բոլորն արտահայտվել են ՌԽՍՖՍՀ-ի (Ռուսաստանի) կազմի մեջ մտնելու օգտին: Այս մասին հայկական մամուլը, չգիտես ինչու, չի նշում, մինչդեռ՝ հենց դա է ապացուցում, որ այդ հարցը հատուկ ծրագրված էր եւ ուղղված հենց Արցախին: Նման սցենարի մասին վաղուց էր խոսվում ռուսաստանյան որոշ վերլուծաբանների կողմից:

Սակայն պետք է նշել, որ ներկա դրությամբ հնարավոր է, որ Ռուսաստանին նույնպես ձեռնտու չէ Արցախում իրավիճակի լարումը, քանի որ՝ եւս մեկ լարված կետ իր սահմանների մոտ՝ կաղճատեն ուկրաինական ֆրոնտում ռուսական ռազմաքաղաքական ուժերը, սակայն նաև հնարավոր է հակառակ սցենարը՝ փորձել Արեւմուտքի ուշադրությունը շեղել:

Այս ամենի համատեքստում պետք է դիտարկել նաև Ֆրանսիայի նախագահի առաջիկա այցը Հայաստան, որի մասին հայտարարվեց Նալբանդյան-Ֆաբյուս փարիզյան հանդիպման ժամանակ, ինչպես նաև՝ վերջերս Հայաստանում ԱՄՆ դեսպանի կողմից արված հայտարարությունը, ըստ որի՝ այս տարի Հայաստան պետք է ժամանի ԱՄՆ պետքարտուղար Ջոն Թերին:

Ինչ էլ որ լինի, մենք՝ հայերս, պետք է միայն ու միայն մեր հույսը դնենք սեփական ուժի վրա ու երբեք օտարների վրա դրված հույսով չպարենք, քանզի թերթելով պատմության եջերը, տեսնում ենք, որ այն ժամանակ, երբ մեր հույսը դրել ենք սեփական ուժի ու կարողությունների վրա, ունեցել ենք ձեռքբերումներ, իսկ երբ հույս ենք դրել օտարի օգնության վրա, ունեցել ենք միայն ու միայն կորուստներ:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Պատմության էջը չենք փակի, մինչեւ որ արդարություն չհաստատվի».

բողոքի ակցիա Ուրուզվայում



Ուրուզվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում ՀՀ-Արմենիա երիտասարդական միությունը «Պատմության էջը չենք փակի, մինչեւ որ արդարություն չհաստատվի» խորագրով բողոքի ակցիա էր կազմակերպել՝ նվիրված սուլճայի շարժերին:

Մոնտեվիդեոյի կենտրոնական Սարանտի փողոցում, որը միայն հետիոտնի համար է նախատեսված եւ համարվում

է քաղաքի բնակիչների ու զբոսաշրջիկների կողմից սիրված վայր, երիտասարդները բողոքի եւ հիշատակի ակցիա են կազմակերպել՝ փողոցի կենտրոնում, սալահատակի վրա ամրացնելով գրքեր, որոնց մեջ երեւում են Սուլճայի թում խոշտանգված եւ դաժանորեն սպանված հայերի լուսանկարներ, իսկ գրքերի մեջտեղով կապված էին հայերի սուգը խորհրդանշող սեւ փուչիկներ:

Այդ ամենն իր շուրջն էր հավաքել բազմաթիվ անցորդների եւ զբոսաշրջիկների: Մարդիկ, կարդալով իրենց

բաժանված թերթիկները, սկսեցին երիտասարդներին բազմաթիվ հարցեր տալ Սուլճայի շարժերի վերաբերյալ, եւ երիտասարդները մանրամասն ներկայացրին Սուլճայի թում կատարված նոր ցեղասպանության վերաբերյալ տեղեկություններ: Ուրուզվայի մամուլը եւ հեռուստատեսությունը նույնպես անդադարձել է հայ երիտասարդների կողմից կազմակերպված բողոքի ակցիային:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒՅՈՒՆ

Ադրբեջանը խստորեն դատապարտվել է ԱՄՆ սենատում

Սուվազայիթում իրականացված ջարդերի 26-րդ տարելիցի կապակցությամբ ԱՄՆ Իլինոյս նահանգը ներկայացնող հանրապետական սենատոր Մարկ Զիրքը խստորեն դատապարտել է Ադրբեջանին Ռաբաթի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվող սպառնալիքների և ագրեսիվ գործողությունների համար:

Նա մասնավորապես ասել է, որ միևնույն է Իլինոյսի ամերիկահայ հա-

տարարության մեջ: Այնուհետև սենատոր Զիրքը անդրադարձել է Ադրբեջանի կողմից Ռաբաթի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ շարունակաբար իրականացվող ագրեսիային. «Ես կոչ եմ անում Ադրբեջանի կառավարությանը՝ անհապաղ դադարեցնել Ռաբաթի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվող սպառնալիքների և ագրեսիվ գործողությունների, ինչը սպառնում է ապակայունացնել տարածաշրջանը»:



մայնքին՝ հարգանքի տուրք մատուցելով նրանց, ովքեր մահացել են Սուվազայիթում հակահայկական բռնությունների ժամանակ, 26 տարի առաջ: «Տասնյակ մարդիկ մահացան եւ հարյուրավորներ վիրավորվեցին երեքօրյա սարսափազդու բռնությունների ժամանակ: Արդյունքում՝ Սուվազայիթի ամբողջ հայ բնակչությունը փախավ քաղաքից: Այդ հրեշավոր գործողությունների մեղավորները երբեք չեն դատապարտվել», - ասված է սենատորի հայ-

Սենատոր Զիրքը իր հայտարարությունում խստորեն դատապարտել է նաև Ադրբեջանի իշխանությունների կողմից մարդասպան Ռամիլ Սաֆարովին ներում չտրուելու և հերոսացմանը՝ համարելով դա անընդունելի և ցավալի արարք:

Սենատոր Զիրքի հայտարարությունը ողջունվել է ՀՀԴ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի կողմից:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ կոնգրեսում դատապարտել են սուվազայիթյան ջարդերը

ԱՄՆ կոնգրեսականները դատապարտել են Սուվազայիթի ջարդերը եւ իրենց աջակցությունը հայտնել Արցախի ժողովրդի ինքնորոշման ժողովրդավարական իրավունքին: Այս մասին հայտնում է ԱՄՆ Հայ Դատի գրասենյակը:

Իր ելույթում կոնգրեսական Սիսիլյանը մասնավորապես նշել է. «Սուվազայիթի ջարդերը պատմության սեւ հետքն են, եւ ցավալիորեն այս իրադարձությունները վերաճեցին նոր բռնությունների, երբ 9 ամիս անց նշանակետում

բեջան պետությունը հիշեցրեց ամբողջ աշխարհին, թե ինչու պետք է խրախուսել Արցախի ժողովրդին՝ ինքնուրույն որոշել իր ապագան, եւ ինչու չպետք է թուլատրել, որ Արցախն ընկնի Ալիեւի ճանկերը, որպեսզի 26 տարի առաջ տեղի ունեցած սուվազայիթյան կոտորածներն ավելի մեծ կոտորածի նախանշան չհանդիսանան: Սուվազայիթի զոհերի հիշատակը չպետք է մոռացվի, եւ մեր բարոյական պարտքն է՝ պատմության կրկնությունից խուսափելու համար



հայտնվեցին Կիրովաբադի հայերը, ապա Բաքվում՝ 1990 թվականին», եւ ավելացրել, որ «Արցախի Հանրապետության ձեռնարկման առաջին իսկ օրերից հանրապետության ազատ ընտրված պետական մարմիններն օգնեցին թափանցիկ ընտրությունների միջոցով կառուցել բաց ժողովրդավարական հասարակություն: Անչափ կարեւոր է, որ Միացյալ Նահանգներն աջակցեն Արցախի անկախությանը եւ ինքնուրույնությանը»:

Իսկ կոնգրեսական Շիֆը նշել է. «Այս սարսափելի գործողություններով Ադր-

բեջանը սման հանցագործությունները»:

Անցյալ շաբաթ ԱՄՆ կոնգրեսի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Էդ Ռոյսը, կոնգրեսականներ Բրեդ Շերմանը, Թոնի Կարոնեսսը, Աննա Էշուն, Զեթին Զարքը և այլքերը և այլքերը Սուվազայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերի զոհերի հիշատակը՝ կոչ անելով Ադրբեջանին դադարեցնել ագրեսիան Ռաբաթի և Լեռնային Ղարաբաղի դեմ:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանական հասարակությունը ցնցվել է Մեծ Բրիտանիայի դեսպանի հայտարարությունից

Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի դեսպան Իրֆան Սիդդիգը կազար համալսարանում «Մեծ Բրիտանիայի ու Հյուսիսային Իռլանդիայի քաղաքականությունն ու քաղաքական մշակույթը» թեմայով դասախոսության ժամանակ զուգահեռներ է անցկացրել Արցախի հարցի եւ Մեծ Բրիտանիայի կազմից Շոտլանդիայի դուրս գալու մտադրության միջև:

«Այն, ինչ կատարվում է Բրիտանիայում, նույնպես հետաքրքիր է: Շոտլանդիայի որոշ բնակիչներ չեն ցանկանում մնալ Մեծ Բրիտանիայի կազմում: Պատերազմ սանձազերծելու փոխարեն, մենք հանրաքվե կանցկացնենք: Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի որոշման հարցում ես ելքը պետք է հանրաքվեն լինի: Դա տրամաբանական փոփոխում է կարգավիճակը որոշելու համար: Գոյություն ունի հակամարտություն. մեկն ուզում է մնալ Ադրբեջանի կազմում, մյուսը՝ չի ուզում: Մեր պարագայում էլ նույն իրավիճակն է: Ոմանք ուզում են մնալ Մեծ Բրիտանիայի կազմում, ոմանք՝ ոչ: Տեսնե՞ք, թե ինչ կլինի հետագայում», - ասել է Սիդդիգը:

Դեսպանի ելույթը Ադրբեջանում, կարելի է ասել, շոկ է առաջացրել: Լրատվամիջոցներում արդեն հայտնվել են դեսպանի հայտարարությունը քննադատող հրապարակումներ: Հայտարարությունը նաև քննարկումների առարկա է դարձել սոցիալական ցանցերում: Ըստ ադրբեջանական haqqin.az կայքի՝ համեմատությունը տեղին չէ, քանի որ Ղարաբաղի պարագայում արդեն իսկ



պարզ է հանրաքվեի արդյունքները: Հաջորդ օրը Մեծ Բրիտանիայի դեսպանությունը մեկնաբանել է դեսպանի հայտարարությունը՝ դեսպանատան ֆեյսբուքյան էջում գրառելով. «Այս տարվա վերջին Շոտլանդիայում պլանավորված հանրաքվեի քննարկման ժամանակ դեսպանը նշել է ինքնորոշման կարելու մասին՝ ավելացնելով, որ Ղարաբաղի ապագա կարգավիճակը նույնպես պետք է որոշվի խաղաղ մեխանիզմների համաձայնության հիման վրա, որը կարտացոլի բոլոր հետաքրքրված անձանց կամարտահայտությունը»:

Հայտարարության մեջ պարունակվում է նաև Ադրբեջանի տարածքային ամբողջականության եւ, այսպես ասած, «օկուպացման» մասին հերթապահ դարձած արտահայտություններ, սակայն Մեծ

Բրիտանիայի դեսպանությունը հաստատեց ինքնորոշման իրավունքի կարելու մասին դեսպանի արտահայտած միտքը եւ չժխտեց Շոտլանդիայի օրինակն Արցախում կիրառելու հնարավորության վերաբերյալ արտահայտած տեսակետը:

Դեսպանի հայտարարությունը բուռն քննարկումների եւ բողոքների առիթ էր դարձել ադրբեջանական հասարակության շրջանում: Հավանաբար, հենց կրքերը հանգստացնելուն էր ուղղված տարածքային ամբողջականության եւ նման այլ՝ ադրբեջանական հասարակության քիմիկան հաճելի արտահայտությունների առկայությունը դեսպանի խոսքերին տրված բացատրության մեջ: Պարզ է, որ Մեծ Բրիտանիան չի ցանկանա նյարդայնացնել Ադրբեջանին: Հենց բրիտանական British Petroleum-ն է ադրբեջանական նավթի հիմնական արդյունահանողները մեկը: Ուստի, զարմանալի չէ Ադրբեջանին հաճույսալու համար վերը նշված արտահայտությունների առկայության հանգամանքը:

Վ. Գ.

Շոշում նշվել է Ազոյի հիշատակի օրը



Մարտի 8-ին ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետ Շոշի Ազոյի՝ Արգամ Հարությունյանի հիշատակի օրն է: Հայրենի Շոշ գյուղում կազմակերպվել է Արգամ Հարությունյանի մահվան 20-րդ տարեկիցին նվիրված միջոցառում:

Շոշի Ազոն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներից է: Նա մասնակցել է գրեթե բոլոր թեժ մարտերին: 1991-1992 թվականներին նրա հրամանատարությամբ Շոշի դասակը մասնակցել է Հարդու-թի (Տող, հանձնաձոր), Ասկերանի (Մալիբեյլու, Խոջալու) շրջանների ինքնապաշտպանական և Շուշիի ազատագրական մարտերին: Եղել է Շուշիի ազատագրման ջոկատի ղեկավարներից՝ Շոշի ուղղության հրամանատարը:

Մարտի 8-ի առավոտյան Շոշի կենտրոնում տեղակայված՝ Արգամ Հարությունյանի հուշա-

քարի մոտ էին հավաքվել նրա հարազատները, գաղափարական և մարտական ընկերները, գյուղի բնակիչները, զինվորականներ, ովքեր ծաղիկներ են խոնարհել զոհված ազատամարտիկի հուշաքարին:

Վաղ առավոտից իրենց կուսակցական ընկերոջ հիշատակը հարգելու համար Շոշ էին այցելել ՀՀԴ Արցախի կառույցի անդամները, ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ՀՀԴ Ասկերանի «Բերդ» կոմիտեի ղեկավարները, ՀՀԴ Արցախի երիտասարդական և ուսանողական միությունների և ՀՕՄ-ի Արցախի միավորից ներկայացուցիչներ:

Նույն օրը Շոշի դպրոցում ԼՂՀ ՊՆ նախաձեռնությամբ և դպրոցի սաների մասնակցությամբ տեղի է ունեցել հերոսին նվիրված միջոցառում:

Միջոցառմանը ներկա մարտական ընկերներն իրենց ելույթի խոսքերում Շոշի Ազոյի ներկայացրին՝ որպես անձնուրաց զինվոր, հրամանատար, ով լավ գիտեր ազատության գինը:

«Նա լավ գիտեր իր առաքելությունը: Գիտեր, որ ծանր բեռ կա իր և զինակիցների ուսերին, սակայն թեթևությամբ և ժպիտով էր անցում մարտնչում: Ժպիտն ու անձնագրիությունը անպակաս էին նրանից», - իր խոսքում նշել է Ազոյի մարտական ընկեր Արկադի Կարապետյանը:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել է հերոսի մասին պատմող ֆիլմ, հնչել հայրենասիրական երգեր, Ազոյին նվիրված բանաստեղծություններ:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Թելման Հարությունյանը՝ գաղափարի ազատամարտիկը



Մարտի 16-ին Թելման Հարությունյանը կդառնար 55 տարեկան: Նրա տարեդարձի կապակությամբ ՀՀԴ Բյուրոյի անդամ Գեորգի Պետրոսյանը, ՀՀԴ ԿԿ-ի, ԱԵՄ-ի, ՀՕՄ-ի անդամներ, ընտանիքը, հարազատներ այցելել են Ստեփանակերտի քաղաքային գերեզմանատուն՝ հարգանքի տուրք մատուցելու հերոսի հիշատակին:

Ծաղկեպսակ և ծաղիկներ խոնարհելուց հետո մատուցվեց հոգեհանգստի կարգ:

Թելման Հարությունյանը Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից առաջամարտիկների շարքում էր: Մտնելով ՀՀԴ

շարքեր, մինչև ազգային-ազատագրական պայքարի ավարտը մարտնչել է հանուն վեհ գաղափարների՝ հանուն հայրենիքի և նրա լուսավոր ապագայի:

Նա այն մարդկանցից է, ում արարքների վրա է ստեղծվել մեր նորագույն պատմությունը՝ 1988-ին Ստեփանակերտի մարզկոմի շենքի խորհրդային միություն դրոշի փոխարեն նա պարզեց հայկական եռագույնը:

«Ընդունված է, որ դրոշը բարձրացնում են հակառակորդի, թշնամու կառույցի վրա, բայց մեր ժողովր-

դին այլ բախտ էր վիճակված: Մեր ժողովուրդը այդ ազատության դրոշը պետք է բարձրացնել իր իսկ կառուցած շենքի վրա: Դա ոչ միայն հաղթանակի, այլև ոգեկոչման, պայքարի դրոշ էր: Այդ պատիվը ազգը վստահեց Թելման Հարությունյանին և նա պատվով դա կատարեց: Այդ դրոշի հետեւից հազարավոր մարդիկ գնացին՝ կերտելով ազգային պետականություն», - դաշնակցական գործչի շիրմաքարի մոտ հավաքված հարազատների ներկայությամբ նշեց ՀՀԴ ԿԿ անդամ Վահրամ Բալայանը:

Ա.ՆԱՐԻՆՅԱՆ

Ուխտավայր և սրբատեղի՝ ի հիշատակ հայրենիքի համար մարտիրոսված նվիրյալների

Ազատագրված Վարանդա (Նախկին Ղարադաղլու) գյուղի բարձրունքում հանդիսավորությամբ բացված հուշարձանը հավերժացնում է «Արաբո» կամավորական ջոկատի և այդ մարտերում զոհված ազատամարտիկների հիշատակը, ովքեր Վարանդա գյուղի մերձակայքում տարված թեժ մարտերի ժամանակ ընկել են հերոսի մահով:

Հուշարձանի բացմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ՊԲ նախարար Մովսես Հակոբյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, «Արաբո» կամավորական ջոկատի հիմնադիրները, ջոկատի զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքները և «Արաբո» ջոկատի ազատամարտիկները:

«Արաբո» կամավորական ջոկատը կազմավորվել է 1989 թվականին, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից, և մինչ 1994 թվականի զինադադարը մասնակցել է ՀՀ սահմանամերձ շրջանների պաշտպանության և Արցախի ազատագրական պայքարի ռազմական գործողություններին:

1989-1994 թվականներին «Արաբո» կամավորական ջոկատը մասնակցել է ՀՀ Եղեգնաձորի (Խաչիկ), Վայքի (Բարձրունի), Նոյեմբերյանի (Ոսկեպար), Ճամբարակի (Վահան), Գորիսի (Շուշունի, Խոջալու) և Արցախի Հանրապետության Շահումյանի (Բուզլուխ, Մանաշիր, Էրեջե, Գյուլիստան), Ասկերանի (Մալիբեյլու, Փառուխ, Դուշնուլար, Խոջալու), Մարտունու (Ղարադաղլու), Մարտակերտի (Կուսապատ, Թալիշ, Դրմբոն, Կարմիրավան, Լեհինավան, Մարաղա), Լաչինի, Զարվաճառի (Օմարի լեռնանցք) շրջանների, Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

22 տարի առաջ, փետրվարի 17-ին՝ 2 օր տևած թեժ մարտերի արդյունքում ազատագրվել է Մարտունու շրջանի մի շարք հայկական գյուղերի մեջ սեպի պես խրված ադրբեջանաբնակ Ղարադաղլու գյուղը: Ղարադաղլուի ազերի բնակչությունը դեռևս խորհրդային տարիներին բազմիցս ոտնձգություններ է իրականացրել հայկական գյուղերի բնակիչների նկատմամբ: Այդ իրավիճակը շարունակվել է մինչ Արցախյան ազատագրական պայքարը: Ադրբեջանա-

նակ Ղարադաղլուն հսկողության տակ էր պահում Մարտունու-Ստեփանակերտ ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին: Ղարադաղլու գյուղը վնասագերծելու համար Հայաստանից օգնության է հասել «Արաբո» կամավորական ջոկատը, որն Արցախում միանալով տեղի ջոկատներին՝ իրականացրել է ռազմական գործողություններ՝ վնասագերծելու Ղարադաղլուն:

Վարանդայի բարձրունքում հուշարձանի կառուցման մտահաղացումը «Արաբո» ջոկատի տղաներին է պատկանում: Այն կա-



ռուցվել է ռուսաստանաբնակ Վալերի Մանուչարյանի հանգանակության շնորհիվ: Հուշարձանի սավանի իջեցման պատվավոր առաքելությունն իրականացրին Վալերի Մանուչարյանը և Ղարադաղլուի ռազմագործողության ժամանակ զոհված Էդիկ Մելքունյանի (Արջի) որդին՝ Սամվել Մելքունյանը:

«Այսօր Վարանդա գյուղում, Մարտունու շրջանում և ողջ հանրապետությունում հիշարժան օր է, - իր խոսքում նշեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, - կառուցվեց ենս մեկ ուխտավայր և սրբատեղի՝ ի հիշատակ հայրենիքի համար մարտիրոսված նվիրյալների»:

Վարանդա գյուղը յուրահատուկ նշանակություն ունի Արցախի և մեր ազատագրա-

կան պայքարի մեջ: Դեռևս խորհրդային տարիներին այդ գյուղը հանդիսանում էր անկայունության և ահաբեկչության օջախներից մեկը: 1960-ական թվականներին այստեղ իրականացված դաժան սպանությունները կարելի էր դասել մարդկության դեմ գործած սարսփելի հանցագործությունների շարքին: Արցախյան ազատամարտի տարիներին Ղարադաղլու գյուղը դարձել էր ադրբեջանական առանձնակի հենակետերից մեկը, որը մեծ վնաս էր հասցնում Մարտունու շրջանի բնակավայրերին: Այն նաև լրջորեն խափանում էր ինչպես Մարտունու քաղաքի և շրջանի ու մյուս բնակավայրերի, այնպես էլ Մարտունու շրջանի և մայրաքաղաք Ստեփանակերտի ու Արցախի կլիներ ապահովել Մարտունու շրջանի անվտանգու-

թյունը: Հենակետի ազատագրման ժամանակ մեր զինվորները ցուցաբերեցին հայ ազգին բնորոշ մարդասիրություն՝ հատուկ միջանցք տրամադրելով խաղաղ բնակչությանը դուրս բերելու համար, ինչի հետեւանքով գյուղը ադրբեջանական զինուժից մաքրելու ընթացքում չի տուժել որևէ քաղաքացիական անձ: Այս փաստը ենս մեկ անգամ ապացույց է այն բանի, որ մեր զինվորները մարտնչել են միայն հակառակորդի բանակի դեմ՝ լինի դա Ղարադաղլու, Խոջալու, թե այլ բնակավայրերում՝ քաղաքացիական բնակչությանը վնաս չհասցնելով: Գյուղի ազատագրման գործում վճռորոշ դերակատարություն է ունեցել լեգենդար «Արաբո» ջոկատը, որի մարտիկները հերոսաբար կռվել են տարբեր ճակատներում: Նախագահ Սա-

հակյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ղարադաղլու բնակավայրի ազատագրման 22-րդ տարեդարձի կապակությամբ և հայրենիքի պաշտպանության համար մղված մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրել է «Արաբո» ջոկատի ազատամարտիկներին՝ նրանցից մի քանիսին՝ հետմահու:

«Արաբո» ջոկատի ռազմական խորհրդի անդամ, լեգենդար ջոկատի տարիքով ամենափոքր ազատամարտիկ Արթուր Օվչյանը վիրավորվել է հենց Ղարադաղլուում մղվող մարտերի ժամանակ: Ներկայումս Արթուր Օվչյանը «Արաբո վետերանների սոցիալ իրավական» ՀԿ փոխնախագահն է: «Ես ծանր եմ վիրավորվել, ինձ արնաքամ վիճակում իմ մարտական ընկերներն են մարտի դաշտից հանել և հասցրել հիվանդանոց», - նշեց Ա. Օվչյանը, - բավականին լավ եմ հիշում, որ ջնայած արնաքամ էի լինում, երբ դուրս էի գալիս մարտի դաշտից, բայց հոգեպես շարունակում էի մարտնչել և իմ մարտական ընկերներին հորդորում էի ջննկնվել ու շարունակել մարտը:

Այսօր են երկու զգացողություն ունեմ: Նախ՝ հաղթանակած զինվորի հպարտություն եմ զգում, միեւնույն ժամանակ՝ նեղված և ընկճված եմ, քանզի պատերազմի ժամանակ ամենալավ ընկերներիս եմ կորցրել: Բնականաբար, մենք քաջ գիտակցում էինք, որ պատերազմում կլինեն կորուստներ, բայց այդ կորուստը մեզ մեծ ցավ է պատճառում: Սակայն այդ ցավը պարտավորեցնող է, քանզի մենք ազատ, անկախ, միացյալ Հայաստանի վեհ գաղափարի ծառաներն ենք, զինվորներն ենք, իսկ մենք դեռ չենք հասել մեր առջե դրված նպատակին՝ Մասիս սարը պետք է լինի հայկական տարածաշրջանում»: Ա. Օվչյանի խոսքերով՝ քանի որ իրենք չեն հասել իրենց նպատակին, այսօր էլ ձեռնունայն չեն նստում և ջոկատի ազատամարտիկներից ոմանք իրենց որդիներին արդեն իսկ ուղարկել են արտերկիր՝ բարձրագույն զինվորական կրթությամբ ստանալու:

Պատրաստեց ԱՆԻ ԱՉՍՅԱՆԸ

ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության փոխնախարարը Լիբանանում Մարտի 8-ին Լիբանանում մեկնարկել է Արցախի մշակույթի շաբաթը

Լիբանանի «Արցախ ֆոնտ»-ի նախաձեռնությամբ մարտի 8-ից մեկնարկել է Արցախյան մշակութային օրերի շաբաթը: Մշակութային միջոցառումների մեկնարկը տրվել է մարտի 8-ին, «Հակոբ Տեր Մելքոնյան» թատերասրահում: Արցախյան մշակութային շաբաթը Լիբանանում ներկայացնում է Արցախի նոր սերունդը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. Կաթողիկոսը Վեհապետի դահլիճում ընդունել է ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լեռնիկ Յովհաննիսյանին եւ Արցախի նոր սերունդը ներկայացնող մի խումբ տաղանդավոր պատանիների ու փոքրիկների: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Լիբանանի «Արցախ ֆոնտի» ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ Արցախի պատվիրակությունը Լիբանան եր ժամանել է Լիբանանում Արցախյան մշակութային շաբաթ անցկացնելու նպատակով:

Արցախի երիտասարդները Վեհապետին են ներկայացրել գեղարվեստական համարներ, որոնք ուղեկցվել են երգով եւ ասմունքով:

Վեհապետ Հայրապետը, բարձր գնահատելով արցախցի պատանիների շնորհաշատ տաղանդը, առանձնահատուկ շեշտել է Արցախի կապված լինելու հրամայականի կարեւորության մասին: Վեհապետը նշել է, որ Արցախի հզորացումն ու ծաղկումը համահայկական առաջնահերթություն է հանդիսանում, եւ՝ որ յուրաքանչյուր հայ պարտավոր է իր մասնակցությունը բերել այդ նվիրական գործին: Վեհապետն իր խոսքն ուղղելով արցախցի պատանիներին՝ նշել է, որ վերջիններս Արցախի ժողովրդի հոգու, հավատքի եւ պայքարի մերօրյա դեսպաններն են, ինչպես նաեւ, խրախուսելով նրանց, հորդորել է շարունակել իրենց նվիրական գործը արվեստի բնագավառում, որը կնպաստի Արցախի առավել ծաղկմանն ու բարգավաճմանը:

Մշակութային շաբաթվա բացումն ազդարարող համերգից առաջ ելույթով հանդես է եկել ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լեռնիկ Յովհաննիսյանը, ով իր ելույթում մասնավորապես նշել է, որ Արցախի նոր սերունդի տաղանդների համերգը Լիբանանում կազմա-

կերպելով՝ ինքնին մեծ ուրախության տեղիք են տալիս, քանզի գտնվում են մի գաղութում, որն Արցախի վերջին տարիների պատմության տարբեր հանգրվանների ժամանակ իր ներդրումն է ունեցել:

Միջոցառման ժամանակ Արցախից ժամանած տաղանդաշատ երիտասարդները հանդես են եկել երաժշտական գործիքային կատարումներով եւ երգերով:

Արցախյան մշակութային օրերի շրջանակներում, համերգային ծրագրերից գատ, մարտի 11-14-ը Լիբանանի «Երջո Քամուլյան-Եռագույն» սրահում տեղի ունեցավ արցախցի 17 գեղանկարիչների աշխատանքների ցուցադրությունը:

Մարտի 12-ին Բեյրութում, Լիբանանի «Ազդակ» պարբերականի կազմակերպմամբ, Արցախի Հանրապետության մշա-



տանքների ցուցադրությունը:

Արցախի մշակութային շաբաթը Լիբանանում շարունակվեց մինչեւ մարտի 14-ը:

Մարտի 12-ին Բեյրութում, Լիբանանի «Ազդակ» պարբերականի կազմակերպմամբ, Արցախի Հանրապետության մշա-

«ԱՊՍՈՍԺ»

Բջջային օպերատորներն անհիմն կերպով սահմանափակում են մարդկանց հաղորդակցությունը

Աշխարհում դժվար թե գտնվի մի երկիր, որտեղ միեւնույն միջազգային կողմնակցող տարածքում գործի ռուսները: ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում գործում է միեւնույն միջազգային +347 կոդը: Փաստորեն, ԼՂՀ-ն եւ ՀՀ-ն համարվում են մեկ երկիր՝ միեւնույն միջազգային կոդով, սակայն արի ու տես, որ նույնիսկ այդ պարագայում հնարավոր է, որ գործի ռուսները:

ենք, ապա չեն հասկանում, թե ինչու չենք կարող ՀՀ քաղաքացիներին հավասար օգտվել բջջային օպերատորների կողմից մատուցվող բոլոր ծառայություններից: Նույնիսկ այսպիսի մի դեպք է եղել, երբ

չկարէ», - նշում է Գայանեն:

ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանի կարծիքով՝ ՀՀ օպերատորների վարած քաղաքականությունն այս հարցում արդարացի չէ, սակայն պատրաստ պետք է լինենք հաղթահարել նաեւ այսպիսի խոչընդոտներ, քանի որ ունենք երկու պետություն, մեկ ազգ:



Օրանժի քարտ վերցնելու համար պետք է գրանցեին քանակության վայրս, սակայն բազայում Ստեփանակերտ քաղաքը նույնիսկ

մագործակցությունն ինչ որ չափով մեղմացնում է բաժանորդների բեռը՝ սահմանելով 45 դրամ, ապա այս մոտեցմանը չիե-

տեւեցին Արմենթելն ու Օրանժը, եւ շարունակում են կրկնակից ավելի սակագին կիրառել: Սոցիալական փաթեթ առաջարկող օպերատորները Հայաստանում պետք է հասկանան, որ շուրջ շուրջ, բայց իրականությանը տեղյակ են թե՛ Արցախում, թե՛ ՀՀ-ում ապրող մեր հայրենակիցները, եւ կոչ կանեն այդ սոցիալական փաթեթի շրջանակներում չմոռանան նաեւ, որ հազարավոր հայեր անելիքներ ունեն թե՛ ՀՀ-ում, թե՛ Արցախում»,- ասաց Արթուր Աղաբեկյանը:

Բազմիցս խոսվել է թե՛ ՂՏ-ի կողմից տրամադրվող ծառայությունների բարձր գնի, թե՛ այլ օպերատորների կողմից վարվող գերշահութային քաղաքականության մասին, սակայն անընդհատ, որպես փաստարկ, բերվում է այն հանգամանքը, որ ԼՂՀ-ն չճանաչված պետություն է, եւ այլ օպերատորներ հետաքրքրված չեն գործունեություն ծավալելու այստեղ: Սակայն չճանաչված լինելու հանգամանքը ռուսներին գի պարագայում որեւէ հիմք չունի, քանի որ ե՛ւ ԼՂՀ-ում, ե՛ւ ՀՀ-ում, ինչպես վերը նշվեց, գործում է միեւնույն միջազգային կոդը:

Պատրաստեց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԸ

Արցախը Կաննի կինոշուկայում



Ֆիլմը 3 պատանիների կյանքի դրամայի մասին է՝ Արամի, Աստղիկի եւ Թեանիկի: Դեպքերը տեղի են ունենում նույն գյուղում եւ միաժամանակ: Պատմությունները սկսվում են գրեթե զուգահեռ եւ ավարտվում, երբ սկսվում է մեծ գործը գյուղի վրա: Ֆիլմում ամեն մի դերասան մարմավորում է մարդկային մի ճակատագիր: «Թեանիկ» լիամետրաժ ֆիլմը բաղկացած է 3 փոքր ֆիլմերից: Ֆիլմի երրորդ մասի սցենարի հեղինակը Անուշ Աղաբաբովն է, մյուս երկու ֆիլմերի սցենարի հեղինակը դրամատուրգ, սցենարիստ Կարինե Խոփկյանն է: Ամբողջ ֆիլմի հիմքում ընկած է Անուշ Աղաբաբովի «Թեանիկ» սցենարը:

Այս տարի Կաննի կինոփառատոնի շրջանակներում կազմակերպվող կինոշուկայում ռեժիսոր Ջիվան Ավետիսյանը ներկայացնելու է Արցախյան պատերազմի մասին պատմող «Թեանիկ» լիամետրաժ ֆիլմը:

«Ապառաժ» թերթի հետ ունեցած զրույցի ժամանակ ֆիլմի ռեժիսոր Ջիվան Ավետիսյանը տեղեկացրեց, որ ֆիլմի պրեմիերան Երեւանում նախատեսվում է մայիս ամսին:

Իսկ Կաննի կինոշուկայում ֆիլմի ցուցադրությունը կայանալու է հենց ֆիլմի ռեժիսորի նախաձեռնությամբ, եւ դահլիճը, որտեղ նախատեսվում է ցուցադրել ֆիլմը, ռեժիսորն իր անձնական միջոցներով է ձեռք բերել:

Սրահում, որտեղ ցուցադրվելու է Արցախյան պատերազմի մասին պատմող ֆիլմը, Ջիվան Ավետիսյանի հավաստմամբ՝ հրավիրված են լինելու համաշխարհային վաճառքի գործակալներ, կինոպրոդյուսերներ: Կաննի կինոշուկայում ֆիլմի ցուցադրության նպատակն է, որպեսզի այն ամբողջ աշխարհում տարածում գտնի: «Կինոշուկայում ֆիլմի ցուցադրման հիմնական նպատակն է՝ հնարավորինս լայն շրջանակներում տարածել ֆիլմը: Չնայած ֆիլմը 80 րոպե տևողություն ունի, սակայն սրահ վարձակալվել է 110 րոպեով,- նշեց Ջ. Ավետիսյանը եւ հավելեց,- «Թեանիկ» ֆիլմի ցու-

ցադրությունից հետո ներկայացնելու են նոր ֆիլմի նախագիծ. այն նույնպես Արցախի մասին է պատմում եւ կոչվում է «Վերջին բնակիչը»:

Ջիվան Ավետիսյանը կարելու է Արցախյան գոյամարտի մասին ֆիլմեր նկարահանել եւ այդ ֆիլմերի միջոցով ազդեցություն կարող է ունենալ: Ռեժիսորի խոսքերով՝ այդ ֆիլմերը հնարավորություն են ստեղծում, որպեսզի մեր երկրի սահմաններից դուրս ապրող մարդիկ, օտար ազգերի ներկայացուցիչները գոնե հասկանան, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում Արցախյան ազատամարտը:

Ի դեպ, «Թեանիկ»-ը հայ-իտալական համատեղ արտադրության ֆիլմ է: Ֆիլմի ստեղծմանն աջակցել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնը եւ ԼՂՀ կառավարությունը:

ԱՆԻ ԱՄՍՅԱՆ

ՀՀԴ երիտասարդները շնորհավորել են քարինտակցի կանանց

Կանանց միամսյակին ընդառաջ՝ ՀՀԴ Արցախի երիտասարդական Միության նախաձեռնությամբ մի խումբ երիտասարդներ շնորհավորել են քարինտակի հերոսամարտում զոհված ազատամարտիկների մայրերին, քույրերին և կանանց:



Այցելելով քարինտակցիների տները՝ երիտասարդները ծաղիկներ և շնորհավորական բացիկներ են նվիրել նրանց:

ՀՀԴ ԱԵՄ-ի Վարիչ մարմնի ներկայացուցիչ Վահրամ Հովսեփյանի խոսքերով՝ այս հերոս կանայք միշտ էլ ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն, հատկապես՝ երիտասարդության:

«Սա մի փոքրիկ անակնկալ էր, սակայն, կարծում եմ, մեզ հաջողվեց ժպիտներ ու մի փոքրիկ ուրախություն

պարգևել նրանց»,- նշեց Վահրամ Հովսեփյանը:

Տիկին Մելանյան, որ պատերազմի ժամանակ կորցրեց եղբորը, ողջունեց երիտասարդների նման նախաձեռնությունը՝ նշելով, որ այսօր ազատամարտիկների մայրերը, քույրերը և կանայք հասարակ ուշադրության կարիք ունեն, ոչ ավելի: Ուրախ եմ, որ այսօրվա երիտասարդը հիշում ու հարգում է ոչ միայն ազատամարտիկների հիշատակը, այլև ուշադրության է արժանացնում նրանց հարազատներին»,- ասաց տիկին Մելանյան:

ՀՀԴ ԱԵՄ-ի երիտասարդական միության նմանատիպ ձեռնարկները շարունակական են լինելու:

Արմինե ՆԱՐԻՅԱՆ

Ստեփանակերտի ուսանողները ՀՀԴ «Նիկոլ Դուման» կենտրոնում

Մարտի 11-13-ը ՀՀԴ ԱԵՄ-ի նախաձեռնությամբ ՀՀԴ Արցախի «Նիկոլ Դուման» կենտրոնում կազմակերպվեց ինտելեկտուալ խաղ: Խաղին մասնակցում էին 8 թիմեր ԼՂՀ տարբեր ուսումնական հաստատություններից՝ Երեւանի ազգային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղից, «Գրիգոր Նարեկացի», «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններից, բժշկական ուսումնարանից, 8-րդ ավագ դպրոցից՝ մեկական թիմեր և երկու թիմ 11-րդ ավագ դպրոցից և ԱրԴՀ-ից:



Խաղի կազմակերպիչների խոսքերով՝ դա փորձ է նախ և առաջ ինտելեկտուալ խաղի մշակույթ ձեռնարկելու և, իհարկե, տարբեր ուսումնական հաստատություններում լավագույն մտածողներին համախմբելու համար: Խաղը կկրի շարունակական բնույթ:

Խաղի երկու փուլերի արդյունքում հաղթող ճանաչվեց «ԱրԴՀ» թիմը, երկրորդ

տեղ զբաղեցրեց Երեւանի ազգային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի թիմը, երրորդ տեղ՝ ԱրԴՀ «Դրոյի հետևորդներ» թիմը:

Հաղթող թիմերը պարգևատրվեցին դրամական պարգևներով, իսկ թիմերի մասնակից աղջիկներին շնորհավորեցին կանանց միամսյակի առթիվ՝ նվիրելով շնորհավորական բացիկներ:

Առաջին տեղ զբաղեցրած «ԱրԴՀ» թիմի ավագ Հարութ Մնացականյանի խոսքերով՝ սա հիանալի նախաձեռնություն է, և նման միջոցառումներ ավելի

հաճախ պետք է կազմակերպվեն: «Ինտելեկտուալ խաղը կազմակերպվել է բարձր մակարդակով, հարցերի ընտրությունը, ըստ իս, շատ ճիշտ էր ընտրված: Սա լավ միջոց է երիտասարդության շրջանում ինտելեկտի բարձրացման համար: Սիրով նորից կմասնակցենք, եթե հրավիրեն»,- ասաց Հարութ Մնացականյանը:

Ա.ՆԱՐԻՅԱՆ

ՀՕՍ-ուհիների այցը սահմանային գործառնա

ՀՕՍ-ի Արցախի միավորը ավանդույթ է դարձրել և յուրաքանչյուր տարի Հայրենյաց պաշտպանի օրը այցելություններ է իրականացնում սահմանամերձ շրջանների գործառնա-սեր, որտեղ էլ ՀՕՍ-ուհիները զինվորականներին են մատուցում իրենց իսկ ձեռքով պատրաստած ճաշը:

Այս տարի ՀՕՍ-ուհիները սահմանամերձ գործառնա են տարել ավանդական հայկական տոլմա, աղցան, թխվածքներ, մրգեր և քաղցրավենիք՝ նախատեսված 400 զինվորի համար: «Վարչության որոշմամբ ընտրվել էր սահմանամերձ ամենաեռու գործառնա: Դա 7-րդ պաշտպանական շրջանն էր»,- նշեց ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանը: ՀՕՍ-ի Արցախի մի-

ավորի ատենապետուհու հավաստմամբ՝ միջոցառումը կազմակերպելու համար դիմել են Պաշտպանության նախարարությանը աջակցություն ցուցաբերելու համար. վերջինս էլ սիրով համաձայնել է աջակցել ՀՕՍ-ի նախաձեռնությանը: ՀՕՍ-ուհիներին սահմանամերձ գործառնա ուղեկցել է ՊԲ «Ասպետ» խումբը, որը բարձր տրամադրություն է հաղորդել սահմանին ծառայող զինվորներին:

«Քանի որ մեզ մոտ հարաբերական անդորր է ու թշնամի ամեն անգամ փորձում է սպա-կայունացնել իրավիճակը և սահմանին լարված իրավիճակներ է ստեղծում, մենք մեր նախաձեռնությամբ փորձել ենք սահմանին կանգնած զինվորներին, որոնք նաեւ մեր երեխաներն են, մեր մայրական գուրգուրանքն ու

աջակցությունը ցուցաբերենք, որպեսզի սահմանին կանգնած զինվորը զգա, որ մենք հիշում ենք յուրաքանչյուր զինվորին, և այդ զինվորները գտնվում են բոլոր մայրերի և, առհասարակ, ողջ հայության ուշադրության կենտրոնում,- նշեց Ա. Հարությունյանը և հավելեց,- մեր նպատակն էր՝ մի փոքր ուժ և կորով հաղորդել հայրենիքի սահմանին կանգնած մեր զինվորներին: Ինչպես և նախորդ տարի՝ այս տարի ևս տոնական ճաշը մատուցվել է մեր իսկ ձեռքերով:

Ա. Հարությունյանի խոսքերով՝ ՀՕՍ-ուհիների այդ ձեռնարկը ոգեւորություն է առաջացրել ոչ միայն զինվորների, այլ նաեւ սպայական կազմի մոտ: «Սպայական կազմը նշեց, որ նման ձեռնարկները հաճախակի չեն կազմա-

կերպվում, մինչդեռ դրանք մեծ ոգեւորություն են առաջացնում սահմանին կանգնած զինվորների մոտ»:

ՀՕՍ-ի Արցախի միավորը Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված միջոցառումն իրականացրել է ՀՕՍ-ի Արցախի միավորի նպատակային ֆոնդի հաշվին, որը ձեռնարկվել է հովանավորների կողմից արված նվիրատվություններով:

ՀՕՍ-ի Արցախի միավորի ատենապետուհին հավաստիացրեց, որ ֆինանսական միջոցների առկայության դեպքում նման ձեռնարկներ շատ ավելի հաճախ կկազմակերպվեն և չեն սպասի որեւէ օրացուցային օրի:

Ա. ԱՆՍՅԱՆ

Արցախում առաջին անգամ անցկացվեց թոնրի հացի փառատոն

Մարտի 8-ին՝ կանանց միջազգային տոն օրը, առաջին անգամ Արցախում՝ Անկերանի շրջանի հանցք համայնքում անցկացվեց թոնրի հացի փառատոն: Առավոտյան ժամը 5-ից հանցք համայնքի կանայք վառել էին իրենց տան թոնիրները և հաց թխել: Իսկ կեսօրին մայրաքաղաք Ստեփանակերտից փառատոնին ներկա գտնվելու համար գյուղ էին ժամանել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, ԱԺ նախագահը, վարչապետը և գործադիր իշխանության ներկայացուցիչները:

Գյուղամիջում, այսին ուղեկցությամբ, հյուրերը համեստեցին տաք թոնրի հացը, այնուհետեւ շարժվեցին գյուղի դպրոցի բակ, որտեղ և անցկացվում էր հիմնական միջոցառումը: Թոնրի հացի փառատոնին հանցքից մասնակցում էր 42 կին, ովքեր ներկայացրին թոնրում իրենց ձեռքով թխած հացը: Կանցք համայնքի ղեկավարը հավաստիացրեց, որ կանցքն այն եզակի գյուղերից է, որը մինչ օրս պահպանում է հնուց եկած ավանդները. խանցքեցիները խանութից առհասարակ հաց չեն գնում: «Կանցքի բնակիչներն ամուր կառչած են իրենց արմատներին, մեր գյուղից արտահոսք առհասարակ չկա: Արդեն 16 տարի է, ինչ կանցք համայնքի ղեկավար եմ, բնակչության թիվն այս տարիների ընթացքում նույնն է մնացել»,- նշեց համայնքի ղեկավար Չորիկ Հարությունյանը:

Ի դեպ, խանցքեցիներն իրենց արտերում մշակված ցորենից են հաց թխում և

թխած հացը շուկա չեն հանում: Կանցքեցի տարեց կանայք կես կատակ, կես լուրջ ասում են, որ իրենց գյուղ հարս եկողներն էլ կարճ ժամանակում սովորում են հաց թխել և շարունակում տարեց սկեսուրների գործը:

Հացի պաշտամունքը բնորոշ է գրեթե բոլոր ժողովուրդների, բայց դրա դրսևորման բնույթը տարբեր է: Հայը շատ ասացվածք էր, ավանդույթներ ունի հացի հետ կապված: Հիշենք թեկուզ այն, որ դարաբաղին, երբ ազատվում է փորձությունից, ասում է՝ «տեսնու ում եմ մի կտոր հաց տվել»: Սրա մեջ մի ամբողջ փիլիսոփայություն կա: Հայերը նաեւ հնուց եկած պաշտամունք ունեն՝ կապված հացի հետ, ինչը մինչ օրս պահպանվում է կանցք գյուղում: Պարզվում է՝ թխած առաջին հացը չեն կտրում՝ մինչև 7 հատ չթխվի: Այդ ավանդույթը կապված է չարը խափանելու հետ: Հացը գետնին գցելը մեղք է համարվում, իսկ երբ այն վայր է ընկնում,



պետք է վերցնել և բարձր տեղ դնել: Հացը հակառակ երեսին դնել չի կարելի: Աստծուն հաճելի չէ, որ հացը դանակով են կտրում, կարող է բերքն էլ կտրվի: Հացը սրբություն է, արդարության խորհրդա-

սկիզբ դրվեց հենց մեր գյուղում»,- նշեց համայնքի ղեկավարը,- դա պատահական ու զարմանալի չէ: Մեր գյուղը տարածքով փոքր է, բայց այստեղ գործում է մոտ 20 թոնիր, որը խոսում է մեր մարդկանց ավանդապաշտության մասին: Գյուղում կյանք կա, գարգացող գյուղ է, մեծ հեռանկարներ ունի:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանի խոսքերով՝ հանրապետության նախագահի հետ կանցք կատարած այնից հետո է որոշում կայացվել՝ նման տոն անցկացնել: «Երբ հանրապետության նախագահի հետ այցելեցինք կանցք, զարմանքով տեսանք, որ գրեթե յուրաքանչյուր տուն պահպանել է թոնրում հաց թխելու ավանդույթը»,- նշեց Ն. Աղաբալյանը: - Հացատոնի փառատոնի միտք ծագեց՝ սկիզբ դնելով մի նոր ավանդույթ, որն ուղղված է մեր ազգային ինքնության պահպանմանը:

Նախարարի հավաստմամբ՝ տոնը կդառնա ավանդական: Հնարավոր է՝ ժամանակի հարցում փոփոխություն մտցվի և փառատոնը տեղափոխվի հնձից հետո: Թոնրի հացի փառատոնը խանցքեցիների և հյուրերի համար իսկապես տոնական էր, քանզի արցախյան հյուրասիրությունն ուղեկցվում էր ժողովրդական երգերով, շուրջպարով:

ԱՆԻ ԱՆՍՅԱՆ

Սոչիի պարաօլիմպիկ խաղերում Հայաստանը ներկայացնում է արցախցի Մհեր Ավանեսյանը

Մարտի 7-16-ը Սոչիում տեղի են ունեցել 11-րդ ձմեռային Պարաօլիմպիկ խաղերը, որին մասնակցում էր նաև Հայաստանը: Այս տարի մեր երկրից ներկայացված է մեկ մարզիկ՝ լեռնադահուկորդ Մհեր Ավանեսյանը: Աշխարհի 45 երկրների 1600 հաշմանդամ մարզիկներ մեդալների 72 հավաքածուների համար կայացրան 5 մարզաձևերում՝ բիաթլոն, դահուկային սպորտ, լեռնադահուկային սպորտ, կյորլինգ եւ հոկեյ: 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո ստեղծված հաշմանդամների «Փյունիկ» միությունը իր վրա է վերցրել երկրաշարժից տուժած հաշմանդամ երեխաների հոգեբանական եւ ֆիզիկական վերականգնումը՝ հասարակության մեջ ինտեգրելու նպատակով:

1994թ. «Փյունիկ» միության նախաձեռնությամբ հիմնադրվեց Հայաստանի Ազգային Պարաօլիմպիկ կոմիտեն, որը հիմնադրման օրվանից զբաղվում է հաշմանդամային սպորտի զարգացմամբ:

Կազմակերպության գործունեության առաջին իսկ տարիներից հաշմանդամ երեխաներն ակտիվ հանգստի եւ սպորտի միջոցով կոփում էին հոգեպես եւ մարմնապես, որը շատ կարեւոր էր նրանց առողջության համար: Սպորտը միշտ համարվել է ուժեղ մարմին եւ ոգի ձեւավորելու միջոց, ինչը առավել եւս անհրաժեշտ էր հաշմանդամներին: Սպորտային միջոցառումներին հաշմանդամների ակտիվ ներգրավմամբ «Փյունիկ» միությանը հաջողվեց

հասնել նրանց ֆիզիկական ունակությունների վերականգնմանն ու կատարելագործմանը:

1994 թվականից ի վեր հայ հաշմանդամ մարզիկները մասնակցում են աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին, Ամառա-



յին ու Ձմեռային Պարաօլիմպիկ խաղերին: Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ 1996 թ. հաշմանդամ մարզիկները մասնակցեցին Ատլանտայի Պարաօլիմպիկ խաղերին: Սոչիում ընթացող Պարաօլիմպիկ Ձմեռային խաղերին այս տարի մեր երկիրը ներկայացնում է ընդամենը

մեկ մարզիկ՝ լեռնադահուկորդ, 32-ամյա Մհեր Ավանեսյանը, ով մասնակցել է 1998թ. Նագանոյի, 2002թ. Սոլթ Լեյկ Սիթիի, 2006թ. Թուրինի եւ 2010թ. Վանկուվերի Պարաօլիմպիկ ձմեռային խաղերին լեռնադահուկ մարզաձևում եւ 2000թ. Սիդնեյի Ամառային Պարաօլիմպիկ խաղերին՝ առաջատար մարզաձևում:

Մհեր Ավանեսյանը Արցախցի է, ծնվել է 1981 թ. Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում: 7 տարեկանում կորցրել է 2 ձեռքը՝ պատճառը եղել է բարձր լարման հոսանքալարերի դիպչելը: 1989 թվականին, ընդգրկվելով «Փյունիկ» միության կազմում, Մհերը սկսեց զբաղվել տարբեր սպորտաձևերով՝ լողով, նետածափությամբ, առաջատար մարզաձևում սպորտաձևով եւ լեռնադահուկով, սակայն իր տեղը գտավ լեռնադահուկ մարզաձևում: Սոչիում Մհերը մասնակցում է իր 6-րդ Պարաօլիմպիկ խաղերին:

Սահմանափակ ֆիզիկական հնարավոր

ություններ ունեցող մարզիկների համար կազմակերպվող Պարաօլիմպիկ խաղերն առաջին անգամ կազմակերպվել են 1960 թվականի ամառային Օլիմպիական խաղերից հետո, իսկ ձմեռային 1-ին Պարաօլիմպիկ խաղերը տեղի են ունեցել 1976 թվականին: 1980 թվականին Միջազգային օլիմպիական կոմիտեի՝ ՄՕԿ-ի եւ Միջազգային պարաօլիմպիկ կոմիտեի՝ ՄՊԿ-ի միջեւ կնքված պայմանագրի համաձայն՝ Պարաօլիմպիկ խաղերն անցկացվում են այն նույն մարզադահլիճներում, որտեղ տեղի են ունենում Օլիմպիական խաղերը:

Հայաստանը Պարաօլիմպիկ խաղերին առաջին անգամ մասնակցել է 1996-ից սկսած: Մհեր Ավանեսյանը 2011թ. Ուկրաինայում կայացած Սլավոնական երկրների առաջնության ժամանակ նվաճել է ոսկե մեդալ՝ պատճառը եղել է լարման հոսանքալարերի դիպչելը: 1989 թվականին, ընդգրկվելով «Փյունիկ» միության կազմում, Մհերը սկսեց զբաղվել տարբեր սպորտաձևերով՝ լողով, նետածափությամբ, առաջատար մարզաձևում սպորտաձևով եւ լեռնադահուկով, սակայն իր տեղը գտավ լեռնադահուկ մարզաձևում: Սոչիում Մհերը մասնակցում է իր 6-րդ Պարաօլիմպիկ խաղերին:

Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող մարզիկների համար կազմակերպվող Պարաօլիմպիկ խաղերն առաջին անգամ մասնակցել է 1996-ից սկսած: Մհեր Ավանեսյանը 2011թ. Ուկրաինայում կայացած Սլավոնական երկրների առաջնության ժամանակ նվաճել է ոսկե մեդալ՝ պատճառը եղել է լարման հոսանքալարերի դիպչելը: 1989 թվականին, ընդգրկվելով «Փյունիկ» միության կազմում, Մհերը սկսեց զբաղվել տարբեր սպորտաձևերով՝ լողով, նետածափությամբ, առաջատար մարզաձևում սպորտաձևով եւ լեռնադահուկով, սակայն իր տեղը գտավ լեռնադահուկ մարզաձևում: Սոչիում Մհերը մասնակցում է իր 6-րդ Պարաօլիմպիկ խաղերին:

Լիլիթ ՄԱՐՏԻՈՍՅԱՆ

Սուրբ Ամենափրկիչը փրկված է մեկընդմիջտ

1884-ին, Վարդավառի տոնին, երբ Լեոն Հուշից գնում էր Դիզափայտ, ճանապարհին գիշերում է Մեծ Թաղերում՝ ուսուցիչ Հովնաթի տանը: Ավանավոր գրողի, պատմաբանի 8-րդ հատորի 9-րդ էջում կարդում ենք.

«Թաղարը մի բավական մեծ գյուղ է, 500 տուն... Նայելով գյուղի արտաքին տեսքին, բնակիչների կեցությանը՝ կարելի է ասել, որ Թաղարն առհասարակ հարուստ գյուղ է: Այստեղ այնքան էլ շատ չեն գետնափոր խրճիթները, որոնցից կազմված են լինում հայ գյուղերը, այլ պատահում են լավ շինված, նոր ձեւի տներ...»:

Իսկ ազգագրագետ, բանահավաք ու հնագետ Երվանդ Լալայանը 1896թ. գրել է. «Նոր Թաղարը. այս գյուղը Վարանդայի ամենաբազմամարդ գյուղն է: Բնակիչները բոլորն էլ լուսավորչական հայեր են, 530 ծովս. 1781 արական, 1459 իգական՝ տեղափոխված Հին Թաղարից... Կա նաև մի եկեղեցի՝ չորս քահանաներով...»:

Հենց այս եկեղեցու մասին է, որ այսօր կանանկայինք մի քանի խոսք ասել: Այն վեր է հանում գյուղի կենտրոնում, ակունքի մոտ եւ կոչվում է Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի: Կառուցվել է, ավելի ճիշտ՝ հին հիմքերի վրա վերստին ձևավորվել է 1846-ին, գյուղի հասարակական ծախսերի հաշվին: Սա են հուշում գեղաբանական մուտքի խորանի ճակատային քարի վրա փորագրված տողերը:

Թե ինչպիսի դեր է խաղացել ավելի քան 150 տարվա պատմություն ունեցող սուրբ տաճարը մարդկանց մեջ քրիստոնեական հավատն ամուր պահելու գործում, թվում է, բոլորը գիտեն: Ուստի, հարկ չենք համարում այս մասին հանգամանորեն խոսել: Պարզապես, մի ավելորդ անգամ շեշտելով, որ եկեղեցին ընդհանրապես միշտ էլ կատարել է կատարում է միջնորդի դեր հավատացյալների եւ Աստծո միջեւ, կապ ստեղծում երկրի ու երկնքի հետ: Իսկ սա անչափ կարեւոր է:

Եւ Տոլստոյի բառերը հիշենք. «Աշխարհում ստեղծված բոլոր մեծ բաները ծնվել են հավատից»:

Լավ է ասված: Եվ ասված է բոլոր ժամանակների համար: Այս ամենը, սակայն, ծիծաղելի ու անհամաստ են թվացել սովետների երկրի՝ հավատ չունեցող առաջնորդներին, տեղական ղեկավարներին, որոնց մեղքով ու կամքով շատ տարիներ առաջ սուրբ տաճարը դարձել էր յուրօրինակ պահեստ՝ կոլխոզի տխր ու վարունգը, մյուս մթերքներն ապահով պահելու համար: Ասել կուզի՝ նրանց մտահոգել է լուկ

գյուղմթերքների պահպանությունը: Իսկ անձրեւներից, բնական աղետներից օր օրի խուճապով, իր դեմը կորցնող հոյակապ շենքի պահպանությունը մոռացության է տրվել, անուշադրության մատուցել: Հետեւա՛նքը: Կարծում ենք՝ դժվար չէ կռահել:

Մարդիկ մտածում, մտահոգվում էին, բայց վիճակը փոխել չէին կարողանում, քանզի «վերքերի բուժումը», նորոգումը հազարների, միլիոնների հետ էր կապված: Մեծ գործի համար մեծ գումար էր պետք: Բայց որտեղի՞ց: Կարծես ոչ մի միջոց ու ելք չկար:

- Մի օր էլ մեզ համար մի լույս կբացվի, ամեն պատեհ առիթով ասում էին հույսով ապրող բնակիչները...

Ու եկավ այդ օրը, եկավ անցնող տարվա 2013-ի երկրորդ կեսին, արմատներով (հորական տատի կողմով) թաղերից Սեբեյ Շահնազարովի հետ: Վերջինս ապրում, աշխատում է Ստավրոպոլում: Մասնագիտությամբ ճարտարապետ է, շինարար: Բայց, ինչպես ընդունված է ասել, ամենից առաջ Մարդ է: Մարդ է՝ բառիս բոլոր իմաստով, հայրենի գեղըցի սիրող մարդ, ազգայինը, հայկական ամեն ինչից վեր դասող, մեր պատմական անցյալն իմացող ու գնահատող մարդ, բարերար ու բարեգործ: Ան այս հիանալի մարդու խելքի ու մտքի, դրամական մեծ ներդրումների շնորհիվ է, որ անցած 6-7 ամիսների այնքան՝ հսկայածավալ աշխատանքներ են կատարվել: Թվարկենք մի քանիսը. շենքի հատակը, որ 132 քառ. մետր է, պատվել է քարե սիրուն սալիկներով: Ու սա՛ համապարտաբար Գարիկ Սաֆարյանի աջակցության ու գորող Էդիկ Լալայանի վարպետության շնորհիվ: Ավելի քան 160 քառ. մետր պատ է շարվել հիմքերն ամրացնելու համար: Գոտեւորդ պատ, որի հաստությունը տեղ-տեղ հասնում է 2, իսկ բարձրությունը՝ 3,5 մետրի: Ու այս ամենը՝ Սարյան եղբայրների՝ հմուտ պատշար Նվերի, Գագոյի ու Արսենի ձեռքով: Պատուհանների ճեղքերը լրիվությամբ փակվել, նորմալ տեսքի են բերվել: Այլ կերպ ասած՝ 1,35 մ հաստությամբ պատ է շարվել: Պատվիրվել էլ էրեւանում պատրաստվել է մի սքանչելի ջահ, որ հիմա կախված է առաստաղից ու փայլում է 4 աղավնիներով «զարդարված» չորս էլեկտրալամպերով:

Բնին առանձնահատուկ գեղեցկություն են տալիս Հաղորթի կանաչավուն մարմարից պատրաստված զոհասեղանը (1x1,50 մ) եւ հայրենի գյուղի, ծննդավայրի մասին այնքան՝ հոգացող Արթուր Աղաբեկյանի նվիրած գորգը, որ Ղարաբաղ «Կարպետում» է գործվել: Դե,

իսկ հաջող, որ պատրաստված է Հոկտեմբերյանի կարմրավուն քարից, վարպետ Կորյունի ձեռքով, ուղղակի նայողին հիացմունք է պատճառում՝ առաջացնելով հպարտության ու հայրենաստության զգացումներ:

Արժե անայայնաբար երկու խոսք ասել ներսի պատերին փակցված նկարների ու սքապատկերների մասին, որոնք նույնպես բերվել են Երեւանից: Բեմի արեւելյան լուսամուտի տակ Սուրենյանցի հիասքանչ գործն է՝ «աստվածամայրը՝ մանկան հետ» (պատճեն, իհարկե): Այն է ձախ թեւերում՝ Թրիստոսի խաչելության պատկերը, Գրիգոր Լուսավորչի, սուրբ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Կորյունի, զորավար Վարդան Մամիկոնյանի, սրբերի շարքին դասավոր երեւելիների դիմանկարները: Բոլորն էլ՝ կտավների վրա, բոլորն էլ՝ աչք շոյող, առիչքնող: Էլի ուրիշ շատ գործեր՝ մեկը մյուսից հմայիչ: Հիմա կասե՛ք՝ միջոցները՝ միջոցներ, իսկ ուղեբեր են շունչ ու կենդանություն տվել այս ամենին: Շատ-շատերը: Նշենք նրանցից մի քանիսի անուն-ազգանունները. Գրիշա Միրզախանյան, Սոկրատ Բաղասյան, Արտաշ Ծափակյան, Բորիկ Բաղասյան, Աշոտ Բալայան, Հայկ Աղաբեկյան եւ ուրիշներ, որոնք շինարարության առաջին իսկ օրից իրենց հիանալի են դրսեւորել, տքնել ու քրտնել են հողը փորելիս, ե՛լ՝ ներսի պատերը հարողարելիս, ե՛լ՝ մուտքին հարող տարածքի գերեզմանաքարերն ուղղելիս ու տեղադրելիս, ե՛լ՝ ուրիշ շատ մեծ ու փոքր գործեր կատարելիս: Այո՛, գովեստի, դրվատանքի արժանի աշխատանք են կատարել շատերը: Հավելենք, որ ոմանք էլ, թեւեւ բառ ու ջլունգ չեն վերցրել, բայց իրենց համեստ նպաստն են բերել: Այսպես. Երիտասարդ գործարար Էրիկ Հայրիյանը նվիրաբերել է 100, Նահիկին ազատամարտիկ Վահրամ Լալայանը՝ 20, Ելենա Հայրիյանը՝ 15, Կարինե Ալթունյանը՝ 10 հազար դրամ: Այս ուսանելի քայլն, անշուշտ, իր շարունակությունը կունենա:

Բնական է, հիմա եկեղեցին առաջվանը չէ, շատ է փոխվել, հիմնովին նորոգվել, նորացվել, նոր ու գեղեցիկ տեսք ստացել: Ու թաղերցիների ուրախությանը, գյուղապետ Վարդիկ Դանիելյանի բառերով ասած՝ չափ ու սահման չկա: Վերջիններս մեծով ու փոքրով իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն են հայտնում մեծ ու բարի մարդուն՝ Սեբեյին, որն իր կատարածը համարում է ոչ թե բարեգործություն, այլ հոգու պարտք՝ հայրենի հողի, իր նախնիների օրրանի հանդեպ: Ու ինչքան լավ է, որ այսպես է դատում: Ինչքան ուրախալի է, որ արվածը (սա կազմում է շուրջ 6 միլիոն

դրամ) դեռ վերջնական սահման չի համարվում:

Մարշալի՝ Արմենակ Խանկերյանցի անվան թանգարանի վարիչ Արծվիկ Լալայանը (հիշեցնենք, որ ավարտել է «Գլաճոր» համալսարանի իրավաբանական ֆակուլտետը), որ հիմա ժամանակավորապես փոխարինում է հովանավորին, ասում է.

- Դեռ անելիքներ կան: Պիտի նորոգվի, կոմպլեքտով ծածկվի տանիքը, բարեկարգվի, կանաչապատվի շենքի ներքեւի փոքր տարածքը, պիտի ավարտին հասցվեն կիսատ մնացած գործերը: Իսկ սա մի շաբաթում, նույնիսկ մի քանի ամիսների ընթացքում չի լինի: Այնպես որ՝ համբերել է պետք:

Կարեւորն արված է, եւ մի բան պարզ է ու հստակ. Ամենափրկիչը, որն ունի մոտ 8 մետր բարձրություն, 17 մետր երկարություն, 9 մետր լայնություն, 6 կամարակապ խորշեր, գեղարվեստորեն ձեւավորված մի քանի պատուհաններ, գեղաբանական փոքր ու հին խաչեր, այլ սուրբ մասունքներ, փրկված է վերջնականապես ու մեկընդմիջտ: Պարզապես պիտի սպասել որոշ ժամանակ եւս: Դե ուրեմն, հուսանք ու հավատանք, որ գալու է բաղձալի օրը: Այլ կերպ ասած՝ գալու է ժամանակ (իսկ դա սարերի ետեւում չէ), երբ հիւնավորց գյուղի՝ Մեծ Թաղերի կիրակնօրյա եկեղեցին կդառնա մշտական գործող եկեղեցի՝ իր քահանայով, կնքավազանով, ծիսակատարությունների հետ անընդմեջ բոլոր պարագաներով:

Հիմա բոլորիս պարտքը մեկն է՝ գնահատել, արժանի հատուցել բոլոր նրանց, ովքեր ապրում են հայրենիքից հեռու, բայց անում են ամեն ինչ՝ արժանի զավակ կոչվելու, կյանքը հայրենիքում ավելի բարեկեցիկ դարձնելու համար: Մի բան եւս, որ պակաս կարեւոր չէ՝ Մեր մարդկային բնավորության գեղեցիկ գծերից ամենատեսանելին պիտի լինի սերը, ամուր հավատքն առ Աստված:

Փա՛րք տանք Տիրոջ եւ նորից ու դարձյալ երախտագիտության խոսք ուղղենք Մայր Հայրենիքում, Ռուսաստանի Դաշնությունում, Սփյուռքում ապրող բոլոր այն հայորդիներին, ովքեր իրենց հոգու հանգստությունը, կյանքի իմաստն ու երջանկությունը տեսնում են հարազատ ժողովրդին, Արցախ աշխարհին գնել մի փոքր աջակցելու, ինչ-որ տեղ՝ սատար կանգնելու, ազգակներ գործերի հովանավոր լինելու մեջ:

Միքայել ԲԱԼՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
 Ստեփանակերտ, Կոմունյանց 17,
 հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
 Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաև նյութեր, որոնցում արժարժված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
ՍԵՆԱԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ